ԳԱՐԵԳԻՆ ՔՀՆՅ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՆՈՐՕՐԵԱՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

«Ձեր ոտն ու մուտքը մեր հողի վրայ խէրով լինի»: Այս խօսքերով քարի գալուստ մաղթեց ծերունի հայորդի մը Ապարանի մէջ խումբ մը երիտասարդներու, որոնք մեկնած էին Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ու Գանատայէն քարոզչական գործունէութեան առաջադրութեամբ, առաջնորդութեամբը Գանատայի Հայց. Եկեղեցւոյ թեմի կորովի առաջնորդին՝ Գերշ. Տ. Յովնան եպիսկոպոս Տէրտէրեանի: Ամիսներ առաջ ծրագրուած այն անդրանիկ առաքելութիւնը, որպէս մտայղացումը երեք երիտասարդ և տեսլաւոր հոգևորականներու, յանձինս Յովնան Սրբազանի, Արարատեան հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդ Գերշ. Գարեգին եպիս. Ներսիսեանի և Ս. Ներսէս ճեմարանի Տեսուչ Բարեշ. Հրաչ Սարկ. Չիլինկիրեանի, ծնունդ առած էր հայրենի մեր ժողովուրդի հոգևոր վերազորթօնքին զարկ տալու, ինչպէս նաև կարգ մը նորամուտ աղանդներու մարդորսութիւնը կասեցնելու նպատակաւ: Հարկը կը զգացուէր նորօրեայ առաքելական արշաւի մը սկիզբը դնելու արտասահմանեան ձեռքերու կարկառումով դէպի հայրենիք:

Ահա այս մտադրութեամբ ի մի հաւաքուեցան 20 հոգիներ, Ս. Ներսէս Ընծայարանի նախաձեռնութեամբ, ներառեալ Գերշ. Յովնան եպիսկոպոս, զոյգ մը քահանայ հայրեր, Տ. Գարեգին քհնյ. Գասպարեան հոգեւոր հովիւ Ուեսթչեսթրի Ս. Յակոբ Եկեղեցւոյ և Տ. Մեսրոպ քհնյ. Սարաֆեան, հոգևոր հովիւ Օքլընտի Ս. Վարդան եկեղեցւոյ, հինգ քահանայացու սաներ և երկոտասանեակ մը եկեղեցասէր հայ երիտասարդներ ու երիտասարդուհիներ Միացեալ Նահանգներու Արևելեան թեմէն և Գանատայի թեմէն, որոնք միաշաբաթեայ պատրաստութեան շրջան մը անցուցին Ս. Ներսէս Աստուածաբանական ճեմարանի մէջ անոր ժրաջան տեսչին ղեկավարութեամբ: Այս միատեղ կեցութեան նպատակն էր, որ երիտասարդները ծանօթանային մօտիկէն իրարու՝ հոգևին զօրուելու միտումով և միանգա-

մայն առաջադրեալ առաքելութեան նպատակը և բնոյթը իրագործելու մտօք, որպէսզի անոնք լաւագոյնս պատրաստուած՝ մտքով, հոգիով և այլազան ծրագրումներով, սկսէին հոգևոր սոյն ճանապարհորդութեան՝ լուրջ և հոգեռանդն կեցուածքով:

Աղօթալից և յուզումնախառն տրամադրութեամբ խումբը ճամբայ ելաւ Նիւ-Եորքէն Յուլիս 26-ին կիրակի օրը, հաստատ համոզումով, որ իր հոգևորականներու առաջնորդութեամբ կ'երթար Մայր Հայրենիք սորվելու և սորվեցնելու, հաւատքի ու աղօթքի հաղորդակից դառնալու, բարոյական ծառայութիւն և նիւթական նպաստ բաշխելու, ինչպէս նաև ուխտ կատարելու յաւերժական Ս. Էջմիածնին և Արարատին դիմաց:

Ըստ ծրագրին խումբը հասաւ Ապարան, իր առաջին առաքելադաշտը, գլխաւորութեամբ Գարեգին և Յովնան Սրբազաններու: Քաղաքապետին ու յարակից պաշտօնեաներու հետ հանդիպումէ մը ետք խումբի անդամները տեղաւորուեցան ընտանիքներու մէջ ուր պիտի մնային ու մասնակից դառնային տեղական կենցաղակերպին: Ապարան ճանչցուած է իր բարեպաշտութեամբ, ըստ որում չէին լքած իրենց եկեղեցին, նոյնիսկ կոմունիստական ամէնախիստ հալածանքի օրերուն և իրենց անվախ հոգևոր հովիւներով մշտապէս մնացած են պատնէշի վրայ:

Երկուշաբթի օրը աւագ աշխատանք եղաւ աղօթք ու պաշտամունք ունենալ Ապարանի Ս. Աստուածածին կիսաքանդ հնադարեան եկեղեցիին մէջ, որը ըստ տեղացիներու Ս. Էջմիածինէն ետք Հայաստանի հնագոյն եկեղեցին է, կառուցուած 320 թ.: Նախօրոք պատրաստուած պաշտամունքի տետրակներ բաժնուեցան ներկաներուն, որոնք մեծով թէ փոքրով փութացած էին խուռներամ լեցնելու այդ անկտուր եկեղեցին: Անոնք բարեպաշտութեամբ մասնակից դարձան առաւօտեան ժամերգութեան՝ ձեռամբարձ երգակցելով Տէրունական աղօթքի երգեցողութեան: Անջնջելի տպաւորութիւն ձգեց մեր վրայ հաւատացեալ ժողովուրդի վիրաւոր սիրտերու կանչը այս վիրաւորուած եկեղեցւոյ երկնաբաց երդիքին տակ, ուր աղիողորմ երգուած «Տէր ողորմեան» ուղղաձիգ բարձրացաւ առ Բարձրեալն՝ պարգեւելով մխիթարութիւն բոլորին: Եկեղեցիներ կրնան ըլլալ կիսաքանդ կամ անհետացած, սակայն ժողովուրդի հաւատքը մշտապէս կը մնայ անյաղթ ու անքակտելի: Աղօթքի այդ պահին մենք բոլորս այդ իրական ճշմարտութիւնը վայելեցինք:

Այնուհետև Յովնան Սրբազան բացատրեց ներկաներուն խումբի առաքելութեան նպատակը և իր օրհնութիւնը բաշխելէ յետոյ ուղղուեցաւ շրջակայ տուները մէկ առ մէկ տնօրհնէքի աւանդական արարողութիւնը կատարելու զոյգ քահանաներու և տեղւոյն հոգևոր հովիւին ընկերակցութեամբ: Տարէցներ կարօտով, իսկ պատանիներ ու երիտասարդներ հետաքրքրութեամբ հետևեցան աղօթքներուն, մինչ ներկայ հոգևորականները կարգ առին օրհնելու աղը, հացն ու ջուրը, հիմնական տարերք և խորհրդանիշը Աստուծոյ օրհնութեան: Այսպէս, ժամերով օրհնուեցան տուները բազմաթիւ ընտանիքներու, քարոզուեցաւ Աստուծոյ խօսքը, ուսուցուեցան աղօթքներ, երբեմն նոյնիսկ խաչակնքելու կերպը, ունկնդրուեցան արտայայտութիւններ ժողովուրդի հաւատքի հաւաստիքին, և նոյն ատեն տրտունջներ իրենց տնտեսական անձկութեան ու քաղաքական անստուգութեան մասին:

Այցելեցինք ընտանիքներ, որոնք նոր սուգի մատնուած էին իրենց ֆէտայի զաւկին սպաննութեան պատճառաւ՝ Արցախեան ինքնապաշտպանութ-

եան ընթացքին: Անկարելի էր չյուզուիլ տեսնելով զուսպ լացը հայ ծնողներու որոնք մէկ օրէն միւսը դարձած էին սեւազգեստ սգաւորներ, ողբալով իրենց «ջահել» հարազատներուն կորուստը: Մեզի վիճակուած էր մխիթարութիւն տալու դժուարին բայց անհրաժեշտ պարտականութիւնը, որ երբեմն կը կատարուի միայն լացակից դառնալով վշտահարին հետ, երբ սուգի սև րոպէին բառեր կը պակսին:

Հետևեալ օրը, ամբողջովին տրամադրուեցանք շրջելու գիւղէ գիւղ— Շէնաւան, Եղիպատրուշ, Արագած, Բժնի, Արզաքանդ և այլն— իրագործելու այն նպատակները, որ խումբը պատրաստուած էր կատարելու. Քարոզիսութիւն, վկայութիւն, խորհրդակցութիւն, ուսուցումներ հաւատքի հիմնական տարրերու մասին, հոգեհանգիստներ և տնօրհնէքներ, ինչպէս նաև մկրտութիւններ թէ՛ մանուկներու և թէ՛ չափահասներու, նոյնիսկ գիշերուայ ուշ ժամերուն:

Ամերիկայի և Գանատայի մեր քահանայագործութեան մէջ տնօրհնէք և հոգեհանգիստ ընդունուած և հիմնական արարողութիւններ ճանչցուած են. այստեղ աւելին՝ իրաքանչիւր արարողութիւն ստացաւ արտասովոր նշանակութիւն և դարձաւ առիթ ուսուցանելու ո՛չ միայն հաւատք ու հաւատալիքներ, այլ մանաւանդ անհրաժեշտութիւնը հոգևոր հաւատարմութեան՝ հանդէպ մեր դարաւոր եկեղեցւոյ ու անոր հիմնադրին մեր Տիրոջ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, յատկապէս ներկայ դժնդակ պայմաններուն մէջ: Չպակսեցան առիթներ հոգևոր խորհրդատուութիւններ և բուժման աղօթքներ կարդալու անձերու հետ, շատեր դեռատի, իրենց հոգեկան խռովքներու բուժման ի խնդիր: Չպակսեցան նաև առիթներ, երբ խումբի անդամները բաշխեցին այդ նպատակաւ իրենց հետ տարած ուտեստեղեններն ու իրերը:

Ժողովուրդին հետ հանդիպումներ ունեցանք ուր որ հնարաւոր էր՝ եկեղեցիներ, սրահներ, տուներ, աշխատավայրեր, բռնագաղթուածներու կայաններ, փողոցներ, լեռներ, ճամբարներ և հիւանդանոցներ: Մեր այցելած զոյգ հիւանդանոցներէն միոյն մէջ բուժուելու բերուած էին հերոս մարտիկներ, որոնք վիրաւորուած էին Արցախի պաշտպանութեան ընթացքին: Անհաւատալի էր տեսնել հաւատքը այդ երիտասարդ կտրիճ ֆէտայիներուն, որոնք այնքան երկիւղած բարեպաշտութեամբ կը խնդրէին աղօթք ու խաչահամբոյր ներկայ հոգևորականներէն, բուժուելէ յետոյ կրին զէնքի վերադառնալու վճռականութեամբ, ոչ միայն ի խնդիր հայրենի հողի պաշտպանութեան, այլ նաև ի պատիւ և ի յիշատակ իրենց զոհուած զինակիցներու:

Չարենցաւանի մէջ շփման մէջ եկանք կարգ մը հայորդիներու հետ, որոնք դաւանափոխ դարձած են և յարած Պենտեկոստականներու աղանդաւորական ուսուցումներուն: Անոնք բոլորովին կը մերժէին Մայր եկեղեցւոյ աւանդական ու բարի սովորութիւնները ու հաւատալիքները՝ ինչպէս խաչակնքելը, սուրբերուն աղօթելը, կրօնական տօնակատարութիւններ ընելը, մատաղն ու ծէսը և այլն: Հարկ եղաւ հաստատել ու շեշտել կարևորութիւնը մեր հոգևոր մօր՝ Հայց. Եկեղեցւոյ ուսուցմանց և աւանդութեանց հետևելու, և զգուշացնել մերազնեայք, որ հեռու մնան օտարոտի և խորթ դաւանութիւններէ ու սաստել դաւանափոխներուն: Խնդրեցինք ու յորդորեցինք, որ մեր հոգևոր մօր կաթը անարատ պահուի ու մեր եկեղեցւոյ զաւակները անձեռնմխելի:

Քանիցս զգացինք թէ մեր այս բարի և բարեմիտ ժողովուրդը ծարաւն ու քաղցն ունի հոգևոր սնունդի, որմէ զրկուած էր եօթանասուն երկար տա-

րիներ և սակայն պահած է իր հաւատքը՝ պարզ ու անսեթևեթ և այժմ կարիքն ունի նոր թափով ու եռանդով սորվելու և սնանելու: Ահա այս հոգևոր մարտահրաւէրին առջև կը գտնէ ինքզինք Հայց. Առաքելական Մայր Ս. Եկեղեցին: Ահա այս հրամայականէն մղուած է, որ քարոզչական այս անդրանիկ խումբը սկիզբ կը դնէ շարժումի մը, որ պէտք է շարունակուի նոյնինքն Ամենայն Հայոց Հայրապետի եռանդագին յորդորով, «Տարին նուազագոյն 3—4 անգամ նմանօրինակ խումբեր պետք է գան և այս սքանչելի ծառայութիւնը մատուցեն մեր ժողովուրդին»: Հրաժեշտի իր խօսքին մէջ Վեհափառ Հայրապետը յայտնեց իր գնահատանքը և նոյնիսկ շնորհակալութիւնը և տուաւ իր հայրապետական օրհնութիւնը այս սքանչելի առաքելութեան կազմակերպողներուն ու մասնակիցներուն ըսելով, «Նորէն եկէք»:

Մենք տեսանք ու կը վկայենք, որ հակառակ բազմատեսակ դժնդակ պայմաններու, հայրենի մեր ժողովուրդի հսկայ զանգուածը ներկայիս յարած ու փարած է եկեղեցիին, որմէ կը սպասէ ստանալ մխիթարութիւն ու քաջութիւն, յոյս և լոյս, խրատ և խրախոյս, գուրգուրանք և նոյնիսկ օգնութիւն:

Մշակներ պէտք են ոչ միայն արտասահմանէն, այլ նաև ու մանաւանդ հայրենիքէն, որ ո՛չ միայն սերմանեն բարի սերմ հոգիներուն մէջ մեր հոգեքաղց ժողովուրդին, այլ նաև արգիլեն ու կասեցնեն որոմ ցանողները մեր հայրենի անդաստանին մէջ, որոնք աղանդաւորական տեսակ տեսակ խոստումներով ու պչրանքներով կը ջանան հրապուրել անկուշտ մնացած հոգիները պարզ ու միամիտ հայրենակիցներու:

Տայ Աստուած, որ մերօրեայ առաքելական այս համեստ շարժումը ծաւալի նոր և ուժեղ թափով: